

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նարեկ Նաիրիի Կարապետյան

**ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Աստենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիրական դեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր
Թաթով Մելքիկի Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

Տնտեսագիտության թեկնածու
Արշալույս Սեմիկի Մարգարյան

Առաջարար կազմակերպություն՝

Եվրոպական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հունիսի 9-ին, ժամը 14.00-ին,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող <<ԲՈԿ-ի
տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. ապրիլի 25-ին:

Մասնագիրական խորհրդի գիրական քարտուղար,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

 **S.Մարգիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Պետական պարտքի և դրա կառավարման հարցերը այսօր առավել քան այժմեական են ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Հատկապես վերջին մեկ ու կես տասնամյակում << կառավարության պարտքի մեծությունն ու բերք շարունակաբար ավելացել են, իսկ պարտքի 70%-ից ավելին կենտրոնացած է արտաքին և արտաքին գործիքների վրա: Համաձայն տնտեսագետների շրջանում ծևափորված ընդհանուր մոտեցման, պարտքի նման կառուցվածքը նպաստավոր չէ հարկաբյուջետային և մակրոտնտեսական կայունության տեսակետից, և պահանջում է դրա բարելավման ուղղությամբ քաղաքականության իրականացում: Ընդ որում, չնայած որ ներքին պարտքի դերի ընդլայման ուղղությամբ վերջին տասնամյակում զգալի առաջընթաց է գրանցվել, միջազգայնորեն ընդունված՝ անվտանգ մակարդակների հասնելու համար << ներքին պետական պարտքի շուկայի խորությունը դեռ առնվազն կրկնակի անգամ պետք է ավելանա:

ՊՊ շուկայի խորացման նպատակահարմարությունը և հետագա հնարավորությունները հասկանալու համար կարևոր է բացահայտել, թե ինչ ազդեցություն են ունենում պետական պարտատոմսերում ներդրումները ֆինանսական համակարգի և ֆինանսական միջնորդության վրա <<-ում: Ընդ որում, քանի որ <<-ում ինչպես մասնավոր հատվածի ֆինանսավորումը, այնպես էլ պետական պարտատոմսերում ներդրումների հիմնական մասն իրականացվում է բանկային համակարգի կողմից, առավել արդիական է այս փոխազդեցությունների ուսումնասիրությունը հենց բանկային համակարգի և ներքին պետական պարտքի միջև: Վերջինս թույլ կտա բացահայտել, թե նախ՝ հնարավոր է ապահովել ներքին պետական պարտքի շուկայի հետագա խորացման գործընթացն այնպես, որ ֆինանսական միջնորդության վրա հնարավոր բացասական ազդեցությունները ցածր լինեն, և, եթե այդ, ապա ինչպես է պետք ապահովել պետական պարտատոմսերի շուկայի համաշափ և հաշվեկշռված ընդլայնում՝ երաշխավորելով պետական պարտքի ոհսկերի նվազեցումը և պարտքի կայունության ամրապնդում՝ ֆինանսական զարգացման և տնտեսական աճի նվազագույն «տուգանմամբ»:

Ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչությունների գնահատումը, առկա հիմնախնդիրների բացահայտումն ու պետական պարտքի կառավարման քաղաքականության բարելավման առաջարկությունների ներկայացումը պայմանավորել են ատենախոսության թեմայի արդիականությունն ու հետազոտության կարևորությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը << ֆինանսական համակարգի և ֆինանսական միջնորդության վրա ներքին պետական պարտքի ազդեցությունների գնահատումն է և բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված պարտքի կառավարման քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ենելով սահմանված նպատակից, ատենախոսության մեջ առաջարվել և լուծվել են հետևյալ խնդիրները:

- Ուսումնասիրել պետական պարտքին և ներքին պետական պարտքի շուկայի զարգացմանը վերաբերող տեսական մոտեցումներն ու առավել նշանակայի հետազոտությունները,
- Ուսումնասիրել ֆինանսական համակարգի զարգացմանը, ինչպես նաև ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի զարգացման փոխառնչություններին վերաբերող տեսությունները և հետազոտությունները,
- Վերլուծել <<-ում ներքին պետական պարտքի զարգացումները և դրանք պայմանավորող գործոնները,
- Վերլուծել ֆինանսական միջնորդության միտումները <<-ում՝ կենտրոնա-նալով բանկային համակարգի զարգացումների վրա,
- Վերլուծել << պետական պարտատոմսերում << բանկային համակարգի ներդրումների կառուցվածքը (ըստ բանկերի), դրա առանձնահատկու-թյունները և միտումները,
- Գնահատել << պետական պարտատոմսերում << առևտրային բանկերի ներդրումների վրա ազդող գործոնները,
- Գնահատել << պետական պարտատոմսերում << առևտրային բանկերի ներդրումների ազդեցությունները վերջիններիս ֆինանսական ցուցանիշ-ների վրա,
- Ուսումնասիրել <<-ում վարվող պարտքի կառավարման քաղաքականու-թյունը և վերլուծել պարտքի առաջնային և երկրորդային շուկաների զարգա-ցումները, գնահատել դրանց զարգացման մակարդակը և ազդող գործոն-ները,
- Բացահայտել << պետական պարտատոմսերի առաջնային շուկայի գործա-կայի հնատիտուտի առանձնահատկությունները <<-ում, ներկայացնել դրա բարելավմանն ուղղված առաջարկություններ,
- Ուրվագծել << պետական պարտատոմսերի շուկայի զարգացման առաջնա-հերթությունները և առաջարկել դրանց ներքո պարտքի կառավարման քաղաքականության լավարկման ուժիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը << ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչություններն են: Հետազոտության առարկան << ֆինանսական համակարգի վրա ներքին պետական պարտքի ազդեցության գնահատումն է:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական ճանաչողության մեթոդներ: Կիրառվել են նաև վիճակագրական, համեմատական վերլուծության, գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման, փորձագիտական գնահատման մեթոդներ: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրե-նական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, << օրենքները, << կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կառույցների կողմից

հրապարակված գեկուցյները, հոդվածները և աշխատանքային փաստաթյալները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ մարմինների պաշտոնական կայքերը, դրանցում գետեղված պաշտոնական տեղեկագրերը, վիճակագրական տվյալների բազաները, ինչպես նաև << առևտրային բանկերի պաշտոնական կայքերում հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ հիմնական դրույթներում.

- Հիմնավորվել է, որ << պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի մասնաբաժնի ավելացումը առավելապես պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետությամբ է պայմանավորված, իսկ պարտատոմների պահանջարկի ազդեցությունը սահմանափակ է, բացառությամբ արժուաբային ճգնաժամների հրավիճակների, երբ ներքին պարտքի ընդլայնումը կտրուկ դանդաղել է:
- << առևտրային բանկերից հավաքագրված տվյալների հիման վրա գնահատվել են բանկերի ներդրումների որոշումների վրա ազդող գործոնները և բացահայտվել են պետական պարտատոմներում ներդրումների ազդեցությունը բանկերի ֆինանսական ցուցանիշների վրա:
- Ըստ առանձին ուղղությունների գնահատվել է << պետական պարտատոմների առաջնային և երկրորդային շուկաների զարգացման մակարդակները, դրանց միջև առկա ճեղքը, հիմնավորվել է վերջինս նվազեցման գործում պետական պարտքի կառավարման քաղաքականության բարելավման անհրաժեշտությունը:
- Գնահատվել են << պետական պարտատոմների տեղաբաշխման և երկրորդային շուկայի շրջանառության ծավալների վրա ազդող գործոններն ու առաջնային գործակալների ինստիտուտի գործունության առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքը կարող են կիրառվել պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ << ֆինանսների նախարարության, << կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև << առևտրային բանկերի համար՝ ակտիվների կառավարման ռազմավարության ընտրության առումով, ինչպես նաև պետական պարտքի և ֆինանսական զարգացման հետազոտություններով գրադարձության մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են <ՊՏՀ< ֆինանսների ամբիոնի նիստերի ընթացքում, << ֆինանսների նախարարությունում, Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վիեննայում կազմակերպված «Հարկաբյուջետային շրջանակներ» դասընթացի շրջանակներում կազմակերպվող քննարկումներում, ինչպես նաև Արժույթի միջազգային հիմնադրամի Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի վարչության փորձագետների հետ:

Հետազոտության արդյունքների առանձին դրույթներ արդեն իսկ կիրառվում են
ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ պետական պարտի քաղաքականության
մշակման և իրականացման գործընթացում:

Աշխատանքի հիմնական արդյունքները ամփոփվել են 14 հոդվածներում:

Աստենախոսության կառուցվածքը: Աստենախոսությունը բաղկացած է ներա-
ծությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից,
օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աստենախոսությունը
բաղկացած է 138 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստենախոսության «Ներքին պետական պարտի» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիա-
կանությունը, ծևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը,
ինսդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական
արդյունքները, գիտական նորույթներն ու դրանց գործնական նշանակությունը,
ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին՝ «Ներքին պետական պարտի և ֆինանսական
զարգացման տեսամեթոդաբանական հիմնահարցեր» գլխում ներկայացվել են
անտական պարտի վերաբերյալ հիմնական տեսությունները, մասնագիտական
մոտեցումներն ու հիմնարար հետազոտությունները, ինչպես նաև ընտարկվել են
ներքին պետական պարտի դերի, ներքին պետական պարտի շուկայի
զարգացման կարևորության և այդ գործընթացի առանձնահատկությունների, երկրի
ֆինանսական համակարգի զարգացումը պայմանավորող գործոնների և այդ
գործընթացում ներքին պետական պարտի դերի վերաբերյալ հարցեր:


Ուսումնասիրելով պետական պարտի վերաբերյալ տարբեր տեսաբանների
մոտեցումները, արձանագրվել է, որ չնայած պետական պարտի դերի վերաբերյալ
չդադարող գիտական բանավեճերին, որոշակի ընդհանրական մոտեցումներ են
ծևակարգել ներքին պետական պարտի վերաբերյալ: Եզրակացրել ենք, որ պատշաճ
ներքին պետական պարտի քաղաքականության իրականացումը կարող է հնարա-
վորություն տալ ապահովելու հարկարյութետային կայունություն և հիմքեր ստեղծելու
ֆինանսական միջնորդության զարգացման համար: Սակայն ուսումնասիրություն-
ները ցոյց են տալիս նաև, որ զարգացող երկրների դեպքում բյուջեի պակասուրոի
ֆինանսավորումը ներքին պետական պարտի շուկայի միջոցով ոչ միշտ է
հասանելի, և վերջինիս ապահովումը կախված է մի շարք՝ այդ թվում պետական
պարտի կառավարման քաղաքականությունից անկախ գործոններից: Միաժամա-
նակ, պետական պարտատոմսերի շուկայի զարգացման ուղղությամբ, հատկապես
վերջին տասնամյակում, իրականացվող նպատակառուղված քաղաքականություն-
ները զարգացող երկրներին թույլ են տվել էական արդյունքներ ապահովել այս
ուղղությամբ:

Անդրադառնալով ֆինանսական համակարգի զարգացմանը և դրա վրա ազդող
գործոններին, պարզել ենք, որ դրա վրա ազդող բազմաթիվ գործոնների շարքում

հաճախ կարևորվում է նաև ներքին պետական պարտքի շուկան: Ըստ որում, վերջինիս ազդեցության բնույթը առավելապես կախված է ֆինանսական համակարգի և ներքին պետական պարտքի շուկայի զարգացման մակարդակների համապատասխանության աստիճանից: Այսպես, ներքին պետական պարտքի ազդեցությունը ֆինանսական համակարգի զարգացման վրա դրական է մինչև որոշակի շեմը, որն անցնելուց հետո այն գերազանցում է ֆինանսական համակարգի հնարավորությունները և սկսում կանել մասնավոր հատվածի ֆինանսավորման ռեսուրսները՝ միաժամանակ մեկ փոխառուից և մեկ ֆինանսական գործիքից կախվածություն առաջացնելով ֆինանսական համակարգում: Ատենախոսության շրջանակներում նաև հանգել ենք եղրակացության, որ այդ ազդեցությունների բնույթը ըստ երկրների գնահատելու համար, առավել նպատակահարմաք են միկրո մակարդակի վերլուծությունները, որոնց արդյունքում բացահայտվում են առանձին ֆինանսական կազմակերպությունների կախվածության չափը պետական պարտատոմսերից և այդ գործիքներում ներդրումների փոխառնչությունը վերջիններիս ֆինանսական արդյունքների հետ:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի զարգացման փոխառնչությունները <<Հ-ում» գլխում քննարկվել են << ներքին պետական պարտքը և դրա ծևավորմանը նպաստող գործները, << ֆինանսական համակարգը և պետական պարտատոմսերում դրա ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև պետական պարտատոմսերում << առևտրային բանկերի ներդրումները, դրանց կառուցվածքն ու ազդեցությունները վերջիններիս գործունեության վրա:

Պարզել ենք, որ չնայած վերջին տասնամյակում << ներքին պարտքի շուկայի զգայի ընդլայնմանը (գծապատկեր 1), պարտքի կառուցվածքը դեռևս չի հասել այնպիսի վիճակի, որ համարելի կինդի զարգացող երկրների միջին ցուցանիշներին (մասնավորապես՝ պետական պարտքի կամ կառավարության պարտքի մեջ ներքին պետական պարտքի մասնաբժին) և կիամարվի ոչ ոխային: Բացի այդ, ի տարբերություն զարգացող երկրների մեծ մասի, << պետական պարտատոմսերի ներդրողների մեջ բացարձակ գերակշռում են առևտրային բանկերը (գծապատկեր 2): Այդուհանդերձ, ոչ բանկ ֆինանսական ինստուտների մասնակցությունը վերջին տարիների աճի միտում ունի, ինչը դրական է ներգործում պետական պարտատոմսերի շուկայի զարգացման վրա: Մյուս կողմից, պետական պարտատոմսերի առաջարկի ընդլայնումն իր հերթին ընդլայնում է ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների գործունեության հնարավորությունները:



Ուղղեսիոն գնահատումների արդյունքով բացահայտվել է, որ ներքին պետական պարտքի զարգացումների համար որոշիչ են ինչպես պարտաստումների առաջարկի (հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունների որոշիչ տնտեսական զարգացումները), այնպես էլ պահանջարկի գործոնները, այդ թվով՝ բանկային համակարգի զարգացումները, սակայն ավելի սահմանափակ ազթեցությամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ ներքին պետական պարտքի վրա ազդող մակրոտնտեսական գործոնների գնահատումը³



| Ներքին պետական պարտքի աճի տեմպ, % | |
|---|-------------------------------------|
| Տնտեսական աճ, % | -0.58*** |
| Տնտեսական աճի տատանողականություն, % | 1.73*** |
| Բանկային ավաղների աճի տեմպ, % | 0.29** |
| Արժուային ճգնաժամ (2009-ին և 2014-ին 4) | -17.79* |
| C | 141.96*** |
| Դեսերմինացիայի գործակից | 0.30 |
| Ընտրանք (դիտարկումների թիվ) | 2001թ. 1-ին եռ-2021թ. 3-րդ եռ. (83) |

¹ Աղյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (https://minfin.am/hv/page/petakan_partqi_veraberval_ampop_tvavner/ վերջին այց՝ 02.04.22), ՀՀ վիճակագրական կոմիտե (<https://www.armstat.am/am/?nid=202> վերջին այց՝ 02.04.22) և հեղինակի հաշվարկներ:

² ԿԲ ներդրումների պետական պարտաստումներում չեն ներառում ուսպու գործարքներով գրավադրված պարտաստումների ծավալը: Աղյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկագրեր (<https://www.cba.am/am/SitePages/periodicals.aspx> վերջին այց՝ 02.04.22):

³ Այս և մյուս տեղերում՝ * նշանակալի է 90% հավանականությամբ, ** նշանակալի է 95% հավանականությամբ, *** նշանակալի է 99% հավանականությամբ:

Ըստգծելով, որ ներքին պարտքի մասնաբաժնի ընդլայնման քաղաքականությունը կարող է հաջողել, եթե ֆինանսական համակարգը պատրաստ է կրանելու պետական պարտատոմսերի աճող ծավաները, ուստιմնասիրվել են պետական պարտատոմսերում ֆինանսական համակարգի ներդրումային հնարավորությունները: Այդ ուստιմնասիրության առանցքում եղել է բանկային համակարգը, քանի որ մի կողմից վերջինս հանդիսանում է իրական տնտեսության հիմնական ֆինանսավորողը, մյուս կողմից՝ առևտրային բանկերին է բաժին ընկնում պետական պարտատոմսերում ներդրումների այլօնիք բաժինը: Բացահայտվել է, որ վերջին երկու տասնամյակներում << բանկային համակարգի ֆինանսական միջնորդության խորությունը շարունակաբար ավելացել է, անկախ տնտեսական պարբերաշրջանի փոփերից՝ զուգամիտվելով զարգացող երկրների միջն ցուցանիշների հետ: << ներքին պետական պարտքի շուկայի խորության ավելացման միտումը հիմնականում համադրելի է եղել բանկային համակարգի զարգացումների հետ, ինչի արդյունքում պետական պարտատոմսերի դերը բանկերի ակտիվներում մնում է համահունչ այլ զարգացող երկրների ցուցանիշներին:



Գծապատկեր 3. << բանկերի խմբավորումն ըստ ակտիվներում վարկերի և պետական պարտատոմսերի միջն կշիռների (2015-2020թթ.)⁴

Գծապատկեր 4. << առևտրային բանկերի պետական պարտատոմսերում ներդրումների մասնաբաժնն ակտիվներում ըստ խմբերի, %⁵

Էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ գնահատվել է բանկերի կողմից պետական պարտատոմսերում ներդրումների ազդեցությունը վերջիններիս ֆինանսական ցուցանիշների վրա: Այդ գնահատումները նախ իրականացվել են ամբողջ բանկային համակարգի մակարդակով, որտեղ արձանագրվել է պարտատոմսերում ներդրումների և շահութաբերության միջև դրական կապ: Այնուհետև գնահատումները կատարվել են հիմնվելով բանկերի պանելային տվյալների վրա, որոնց ուստիմնասիրությունից պարզ է դարձել, որ պետական պարտատոմսերում ներդրումների կառուցվածքը բավական կենտրոնացված է (ավելի կենտրոնացված, քան բանկերի

⁴ Աղբյուր՝ << առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններ:

⁵ Աղբյուր՝ << առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններ:

ակտիվները և վարկային ներդրումները): Բանկերը խմբավիրավել են ըստ վարկերում և պետական պարտատոմսերում ներդրումների համամասնությունների: Արդյունքում միայն փոքր թվով առևտրային բանկերի գործունությունն է, որ կենտրոնացված է պետական պարտատոմսերում ներդրումների ուղղությամբ (գծապատճեր 3 և 4):

Այնուհետև պանելային ռեգուլյարն մոդելի օգնությամբ բացահայտվել են պետական պարտատոմսերում ներդրումները բացատրող գործուները, ինչի արդյունքում պետական պարտատոմսերում ներդրումների տարբերությունները բացատրվել են բանկի կապիտայի մեծությամբ, շուկայի առաջնային գործակայի կարգավիճակով և վարկային ներդրումների չափով, սակայն այդ տարբերությունների էական մասը չափելի գործուներով չբացատրված է մնացել, ինչը վերագրվել է բանկերի ռազմավարության ընտրությանը՝ կապելով որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործուների ազդեցության հետ:

Մեր կողմից գնահատվել են պետական պարտատոմսերում ներդրումների ազդեցությունը բանկերի առանձին խմբերի, ինչպես նաև ողջ բանկային համակարգի ֆինանսական ցուցանիշների վրա (ակտիվների և կապիտայի շահութաբերություն, վարկավորում): Արդյունքում պարզվել է, որ այն բանկերը, որոնք գերադասում են պետական պարտատոմսերում ներդրումները՝ վարկային ներդրումների համեմատ, արձագանագրում են շահութաբերության աճ: Մասնագիտական գրականությունը ուղղված ընդունելով, վերջիններս որպես «ծովյալ բանկի» վարքագիծ դրսերող բանկեր (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. << առևտրային բանկերի շահութաբերության վրա << պետական պարտատոմսերում ներդրումների ազդեցության գնահատումը պանելային ռեգուլյարն մոդելով⁶

| Շահութաբերություն ըստ ակտիվների (ROA) | | | |
|---------------------------------------|-----------|---------------------|--------------------|
| | 17 բանկեր | Խումբ 1 (14 բանկեր) | Խումբ 2 (3 բանկեր) |
| Log (<< պետական պարտատոմսեր/ակտիվներ) | 0.08 | -0.02 | 0.81*** |
| Log (տնտեսական աճ) | 1.15*** | 1.10*** | 0.76 |
| Log (ակտրվելու) | 0.14 | 0.07 | -0.75** |
| Log (GMI ինդեքս) | 0.10 | 0.11 | 1.01* |
| C | -6.40*** | -5.75*** | -7.72* |
| Դեսերմինացիայի գործակից | 0.34 | 0.28 | 0.56 |

Մյուս բանկերի դեպքում, որոնք նախընտրում են առավել դիվերսիֆիկացված ներդրումային պորտֆել, պետական պարտատոմսերում ներդրումների ավելացումը այլ հավասար պայմաններում վարկավորման տեմպերի դանդաղման ռիսկեր է ստեղծում: Հանգել ենք եզրակացության, որ պետական պարտատոմսերի շուկայի հետագա խորացումը կարող է բանկային համակարգում կառուցվածքային ձևախեղումների ռիսկեր առաջացնել, ուստի կարևորվել է պետական պարտատոմսերի

⁶ Մոդելները գնահատվել են 2015թ. 1-ին եռամյակից 2020թ. 4-րդ եռամյակն ընդգրկող տվյալների հիման վրա՝ ընդգրկելով մինչև 408 դիտարկում:

շուկայի տարրեր բաղադրիչների համաշխափ զարգացման ապահովումը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման հնարավորությունները և հեռանկարները» գլխում քննարկվել են ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման և պարտքի կառավարման քաղաքականության հիմնահարցերը, ինչպես նաև որվագծել են ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման քաղաքականության առաջնահերթություններն ու առաջարկվել վերջիններիս վրա հիմնված պարտատոմսերի շուկայի հաշվեկշռված զարգացում ապահովելու ուժիներ:

ՀՀ-ում իրականացվող հարկաբրուցետային և պետական պարտքի կառավարման քաղաքականությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ դրանք թիրախավորված են ՀՀ ներքին պարտքի շուկայի խորության ավելացման ուղղությամբ, ուստի կարևորվել է պետական պարտատոմսերի շուկայի զարգացման ներկա վիճակի ախտորոշումը և զարգացման հնարավորությունների ու խոչընդուների գնահատումը: Վերլուծությունները ցոյց են տվել, որ ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկան ծևավորման պահից նշանակալի առաջնթաց է գրանցել: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Համաշխարհային բանկի (ՀԲ) մեթոդաբանությամբ մեր կողմից կատարված գնահատումները հավաստել են, որ ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկան գտնվում է զարգացման ամենաբարձր՝ «հասունության» փուլում, չնայած որ այդ գնահատականի վրա բացասաբար է ազդում կառավարության պարտքում ներքին պարտքի փոքր կշիռը: Առաջնային շուկայում պարտատոմսերի նկատմամբ ծևավորվող պահանջարկի ուսումնասիրությունը ևս հաստատել է այս գնահատականը: Իսկ ոեգրեսիոն մոդելով կատարված գնահատման արդյունքում բացահայտվել է, որ պահանջարկի փոփոխության միտումները բացատրվում են բանկային համակարգի իրացվելիության և կապիտալացվածության փոփոխություններով, ինչպես նաև փոփոխաժեքի տատանողականությամբ, ինչն իր հերթին ևս մեկ անգամ ընդգծել է ֆինանսական համակարգի զարգացման և պետական պարտատոմսերի շուկայի միջև առկա փոխադարձ կապի առկայությունը: Որպես առաջնային շուկայի կարևոր բաղադրիչ՝ ուսումնասիրվել է նաև առաջնային շուկայի գործակաների ինստիտուտը, և Էկոնոմետրիկ գնահատումների արդյունքում պարզվել է, որ գործակայի կարգավիճակի վրա ազդող գործոններ են բանկի չափը և պետական պարտատոմսերում ներդրումների ծավալը (այդուսակ 3): Այնուհետև ուսումնասիրվել է ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկան, որը ԱՄՀ և ՀԲ նույն մեթոդաբանությամբ գնահատմամբ, արձանագրվել է, որ գտնվում է «ծևավորման» փուլում պայմանավորված շրջանառության փոքր ծավալներով և գործարքների բարձր սիրեղով: Ըստ կատարված գնահատումների, երկրորդային շուկայում երկարաժամկետ պարտատոմսերի շրջանառության ծավալները բացատրվում են շրջանառության մեջ առկա պարտատոմսերի և նոր տեղաբաշխումների ծավալներով, ինչպես նաև բանկային համակարգի կապիտալացվածության մակարդակով: Իսկ կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի շրջանառության ծավալների վրա այս գործոնների ազդեցությունը փոքր կամ աննշան է (այդուսակ 4):

**Այլուսակ 3. Գանձապետական
պարտատոմների տեղաբաշխումների
հարաբերական պահանջարկի վրա ազդող
գործոնների գնահատումը**

| Կափսալ փոփոխական՝ ՊԴ պահանջարկ/տեղաբաշխում, % | |
|---|---|
| Բանկային համակարգի վարկեր/ավանդներ | -1.5** |
| Բանկային համակարգի հաշվեկշռային կապիտալ/ակտիվներ | 15.2** |
| ԱՄՆ դրամ/ $\times \times$ դրամ փոխարժեքի տառանողականություն | -3.7** |
| Ազատ անդամ | 161.4 |
| Ղետերմինացիայի գործակից | 0.20 |
| Ընտրանք (դիտարկումների թիվ) | 2012թ. հոնվար - 2021թ. օգոստոս (116 ամիս) |

**Այլուսակ 4. Երկրորդային շուկայի
շրջանառության ծավալների վրա
ազդող գործոնները**

| Կափսալ փոփոխական՝ Լօց(Երկրորդային շուկայի շրջանառություն) | |
|--|---|
| Լօց(շրջանառության մեջ առկա պարտատոմներ) | 0.7*** |
| Լօց(տեղաբաշխումների ծավալ) | 0.3*** |
| Բանկային համակարգի կապիտալ/ակտիվներ | 0.2*** |
| Ազատ անդամ | -4.4*** |
| Ղետերմինացիայի գործակից | 0.43 |
| Ընտրանք (դիտարկումների թիվ) | 2012թ. դեկտեմբեր - 2021թ. օգոստոս (103 ամիս) |

Փորձելով բացահայտել առաջնային և երկրորդային շուկաների զարգացման միջև առկա խզվածքի պատճառները՝ գնահատվել է պետական պարտատոմների ներդրողների համախմբի զարգացման մակարդակը: Կրիառված մեթոդաբանությամբ պետական պարտատոմների ներդրողների համախումբը գնահատվել է, որպես «զարգացման» փուլին համապատասխան, որը, միաժամանակ, բավական թևորացված է ըստ բանկային և ոչ բանկային հատվածների: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ բանկային համակարգի զարգացումը երաշխավորում է առաջնային շուկայի զարգացման բարձր մակարդակ, մինչենու ոչ բանկային հատվածի համար «ձևավորման» փուլի գնահատականը, ինչպես նաև ոչ ռեզիլիենտ ներդրողների մասնակցության ցածր մակարդակը, սահմանափակում են երկրորդային շուկայի զարգացումը (այլուսակ 5): Շարունակելով ուսումնասիրությունը ոչ ռեզիլիենտ ներդրողների մասնակցությանը խոչընդոտող գործոնների ուղղությամբ, գնահատվել է պետական պարտատոմների դրամային և դրարային եկամտաբերությունների բաշխվածությունը: Արդյունքները ցույց են տվել, որ $\angle \angle$ պետական պարտատոմների դրամային և դրարային եկամտաբերությունների բաշխվածության միջև շեղվածքը մեծ չէ, ինչը ցույց է տալիս, որ ոչ ռեզիլիենտների ներգրավմանն ուղղված արդյունավետ միջոցառումները կարող են ընդլայնել ներդրողների համախումբը:

Այլուսակ 5. << պետական պարտատոմսերի շուկայի զարգացման ախտորոշման արդյունքները >>

| Առաջնային շուկա | | Երկրորդային շուկա | | Ներդրողների համախումբ | |
|---|------|---|------|--|------|
| Ցուցանիշ | Փուլ | Ցուցանիշ | Փուլ | Ցուցանիշ | Փուլ |
| Կշիռ կառավարության պարտում | 2 | Երկրորդային շուկայի օրեան շրջանառության գործակիցը | 2 | Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ | 4 |
| Մինչև մարտումը մնացած միջին կշռված ժամկետ, տարի | 4 | | | Խոշոր 3 բանկերի կշիռը բանկային համակարգում | 4 |
| Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, % | 4 | | | Ոչ բանկային հատվածի ակտիվներ/ՀՆԱ | 2 |
| Մինչև տոկոսադրույթի վերափրսումը մնացած միջին կշռված ժամկետ, տարի | 4 | 10 տարիի ժամեթությամբ պարտատմի միջին առաջարկ-այահանջարկ սիրեղ | 2 | Ոչ բանկային հատվածի կշիռը ազգային արժույթով պարտատոմսերի ներդրողների կառուցվածքում | 2 |
| Առաջիկա 365 օրվա ընթացքում վերափրսում պարտքի տեսակարար կշիռ, % | 4 | | | | |
| Ամփոփ գնահատական | 4 | | 2 | | 3 |

*1 – «սաղմանափորում», 2- «ձևափորում», 3-«զարգացում», 4-«հասունացույն»

Իրականացված գնահատումների հիման վրա առանձնացվել են պետական պարտատոմսերի շուկայի զարգացման առաջնահերթություններ: Դրանք ուղղված են շուկայի զարգացման ճեղքերի նվազեցման՝ ապահովելով պետական պարտատոմսերի շուկայի զարգացումն այն ճնանապարհով, որ նվազագույնի հասնեն ֆինանսական համակարգի զարգացումը խաթարող դիսկերը: Առանձնացված առաջնահերթությունները և դրանց շրջանակում առաջարկվող միջոցառումները հետևյալն են:

1. **Պակասուրդի կառուցվածքում ներքին աղբյուրներով ֆինանսավորման բարձր կշռի ապահովումը:** Այդ նպատակով առաջարկվել է սահմանել պակասուրդի ֆինանսավորման մեջ ներքին աղբյուրների այնպիսի ուղենիշ, որը թույլ կտա նախանշվող հորիզոնում հասնել կառավարության պարտքում ներքին պարտքի թիրախային կշռին (միջազգային մակարդակով վերլուծությամբ արդարացված է գնահատվում նվազագույնը 50%-ի շեմը, սակայն, կարծում ենք, Հայաստանի դեպքում թիրախը պետք է հաշվարկվի և հիմնավորվի համապատասխան սցենարային վերլուծությամբ):

2. **Երկրորդային շուկայի խորության և իրացվելիության ավելացում:** Այս տեսակետից կարևորվել է պետական պարտատոմսերի աճուրդների քանակի նվազեցման և ծավալների մեծացման քաղաքականության շարունակությունը, որից բխող վերափինանսավորման դիսկերի հնարավոր աճի կառավարման համար, կարևոր են կանխատեսելի և թափանցիկ կերպով իրականացվող «կանխիկի բարձիկի» քաղաքականության և պարտավորությունների կառավարման գործառնությունների իրականացումը:

3. Ներդրողների համախմբի ընդլայնում ոչ ռեզիլենտ ներդրողների հաշվին:
Այս առաջնահերթության շրջանակում քննարկվել է զարգացող երկրների կողմից կիրառվող տարրեր մեխանիզմներ, այդ թվում՝ վարկային մուրհակների կիրառումը, միջազգային շուկայում ազգային արժույթով պարտատոմսերի թողարկումը, տեղական և միջազգային դեպոզիտարիաների միջև կամուրջի ստեղծումը և ՀՀ-ում գործող՝ տեղական շուկայում միջազգային դեպոզիտար ծառայությունների մատուցումը, առաջարկելով դիտարկել առաջնների կիրառման և երկրորդի արդյունավետության բարձրացման հնարավոր ուժինները՝ ստեղծելով դրանց համար ինստիտուցիոնալ առավել ամուր հիմքեր:

Միաժամանակ, պետական պարտատոմսերի շուկայի զարգացման առաջնահերթությունների համատերաստում ուսումնասիրվել են նաև պետական պարտատոմսերի առաջնային գործակալի ինստիտուտի կատարելագործման հնարավորությունները՝ կենտրոնանալով գործակալների գնահատման և ընտրության համակարգերի, ինչպես նաև արտոնությունների և պարտավորությունների հաշվեկշռման հարցի վրա: Այդ առումով, առաջարկվել է վերջիններիս գնահատման համակարգում ներառել ներդրողների համախմբի ընդլայնման ուղղությամբ կատարված աշխատանքը և դրանց պարտավորություններն արդյունավետորեն հակակշռել որոշակի արտոնություններով երկրորդային շուկայում:

Ստենախոսությունը Եզրափակվուա է «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնով, որտեղ ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները: Վերջիններս ամփոփ կերպով ձևակերպված են ստորև:

- Զարգացող երկրների համար պետական պարտքի մեջ ներքին պարտքի մեջ մասնաբաժնի պահովության խիստ կարևոր է, քանի որ այն մի կողմից կնվազեցնի պարտքային ճնշաժամերի հավանականությունը, մյուս կողմից՝ կապահովի շուկայում բարձր իրացվելի ակտիվների և կորպորատիվ գործիքների գնանշման ուղենիշի առկայություն՝ նպաստելով ֆինանսական համակարգի և ֆինանսական շուկաների բնականոն գործունությանը և զարգացմանը:
- Եթե մինչև 2000-ականները ներքին պետական պարտքի դերի ընդլայնումը հիմնականում տեղի է ունեցել խոշոր տնտեսական կամ այլ ցնցումների պայմաններում (քանի որ երկրները պատրաստ չեն կատարելու ներքին պարտքի շուկայի զարգացման «ստարտային ծախսերը»), ապա վերջին երկու տասնամյակներում զարգացող երկրների վարած ներքին պարտքի շուկայի խորացման քաղաքականությունները գգալի առաջընթաց են ապահովել վերջիններիս համար: Միաժամանակ, այդ քաղաքականությունների արդյունավետությունը կախված է ֆինանսական համակարգի զարգացման մակարդակից:
- Ֆինանսական համակարգի զարգացումը իր հերթին կախված է մի շարքի ինստիտուցիոնալ և այլ գործուններից: Ներքին պետական պարտքը դրական ազդեցություն կարող է ունենալ ֆինանսական համակարգի վրա մինչև

որոշակի սահման, որը կախված է ֆինանսական համակարգի զարգացման մակարդակից և այլ տնտեսական գործուներից:

- Թեև վերջին տասնամյակում << ներքին պետական պարտքի շուկայի խորությունն էականորեն ավելացել է, այն դեռ բավարար չէ պարտքի նպաստավոր կառուցվածք ապահովելու համար: Կատարված ուսումնասիրությունը և էկոնոմետրիկ գնահատումները ցույց են տվել, որ շուկայի խորության ավելացման գործում կարևոր են եղել ճգնաժամերին հակագդելու համար բյուջեի ֆինանսավորման կարիքի կտրուկ ավելացումները և պետական պարտատոմսերի շուկայի զարգացման քաղաքականությունը, որն արձագանքել է ֆինանսական համակարգի՝ պարտը կլանելու հնարավորության բարձրացմանը:
- <<-ում ֆինանսական միջնորդությունը և պետական պարտատոմսերում ներդրումները կենտրոնացած են բանկային համակարգի ֆինանսական միջնորդության խորությունը վերջին երկու տասնամյակներում շեշտակի ավելացել է՝ գուգամիտելով զարգացող երկրների միջին ցուցանիշներին, ինչի արդյունքում պետական պարտատոմսերի դերը բանկերի ակտիվներում հիմնականում կայուն է եղել, իսկ միջազգային համեմատության մեջ՝ պահպանվել միջին մակարդակում:
- **Պետական պարտատոմսերում բանկերի ներդրումները բավականին կենտրոնացված կառուցվածք ունեն: Մասնավորապես, առանձնանում են բանկեր, որոնց գործունությունը կենտրոնանում է պետական պարտատոմսերում ներդրումների վրա: Այս ընտրությունը քանակակես բացատրելի չէ պարտատոմսերում մյուս բանկերի համակարգի ներդրումները բացատրող գործուներով, ինչպիսիք են կապիտալի մակարդակը և առաջնային շուկայի գործակալ լինելու հանգամանքը:**
- **Պետական պարտատոմսերում ավելի շատ ներդրումներ իրականացնող բանկերի դեպքում այդ ներդրումների ծավալների ավելացումը բարձրացնում է շահութաբերությունը, իսկ մյուսների դեպքում՝ նման օրինաչփություն չի դրսւուրվում: Փոխարենը բանկերի մեծ մասի դեպքում պետական պարտատոմսերում ներդրումները ավելի շատ են դուրս մղում վարկավորումը, ինչն այլ հավասար պայմաններում ֆինանսական միջնորդության դանդաղման դրշակի ռիսկ է ստեղծում: Սակայն հաշվի առնելով, որ այս խմբի մոտ առկա չէ պետական պարտատոմսերում ներդրումների բարձրացմամբ շահութաբերության ավելացման օրինաչփություն, այս ռիսկերը գնահատվել են կառավարելի, ինչը թույլ է տալիս կառավարությանը շարունակել ներքին պետական պարտքի շուկայի խորացման քաղաքականությունը՝ միաժամանակ հաշվի առնելով առկա ռիսկերը և փորձելով նվազեցնել ֆինանսական միջնորդության վրա հնարավոր բացասական ագրեցությունները:**
- << պետական պարտատոմսերի շուկայի զարգացման մակարդակի ախտորոշմամբ բացահայտվել է, որ առաջնային շուկան գտնվում է ամենաբարձր՝

«հասունության» փուլում, մինչդեռ երկրորդային շուկան դրանից հետ երկու քայլով՝ գնահատվելով «ձևավորման» փուլում: Պետական պարտատոմսերի շուկայում այս խզվածքին համահոնչ խզվածք է առկա ներդրողների համախմբում, որտեղ բանկային համակարգը գնահատվում է «հասունության», իսկ ոչ բանկ ֆինանսական ինստիտուները՝ «ձևավորման» փուլում:

- «Հ պետական պարտատոմսերի շուկայի երկու հատվածներն ել կախում ունեն բանկային համակարգից, ինչը հաստատում է զարգացման ախտորոշմամբ ստացված արդյունքը: Մասնավորապես, ըստ Էմպիրիկ գնահատումների, «Հ պետական պարտատոմսերի առաջնային շուկայի ամենակարևոր բնութագրիներից մեկը՝ պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը կախված է բանկային համակարգի զարգացումներից, իսկ երկրորդային շուկայի շրջանառությունը՝ պարտքի կառավարման քաղաքականությունից և բանկային համակարգի զարգացումներից:»
- Առաջնային և երկրորդային շուկաների խզվածքի մեջման ուժին ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների շարունակական զարգացումն է, որի առումով հատկապես կենսաթոշակային ֆոնդերի և ներդրումային կազմակերպությունների ակտիվների վերջին տարիների աճի միտումի պահպանումը կարևոր դերակատարում ունի: Միաժամանակ, պետական պարտատոմսերի շուկայի խորության ավելացումը իր հերթին օժանդակում է ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների գործունեության հնարավորությունների ավելացմանը՝ նպաստելով նաև պետական պարտատոմսերի շուկայում առկա անհամաչափությունների մեջմմանը:
- «Պետական պարտատոմսերի շուկայի զարգացման հիմնական պայմանները «Հ-ում առկա են, ինչը թույլ է տալս նպատակադրել բյուջեի ֆինանսավորման կարիքը երկար ժամկետում կայուն և հուսալի կերպով ապահովող պետական պարտատոմսերի շուկայի ձևավորումը: Այդ նպատակին ֆինանսական համակարգի զարգացման վրա նվազագույն բացասական ազդեցություններով հասնելու համար, առաջարկվել է որպես քաղաքականության առաջնահերթություններ սահմանել պետական բյուջեի պակասուրդի կառուցվածքում ներքին աղբյուրների բարձր կշռի պահպանումը, երկրորդային շուկայի խորության և իրացվելիության ավելացումը և ներդրողների համախմբի ընդայնումը ոչ ուղղիրենս ներդրողների հաշվին՝ ներկայացնելով նաև այդ խնդիրների իրականացման համար հնարավոր մեխանիզմները:»
- «Հ առաջնային շուկայի գործակալների ինստիտուտը հիմնականում հիմնվում է Եվրոպական երկրների փորձի վրա, սակայն կիրառվող մեխանիզմների արդյունքում գործակալների ընտրությունը փաստացիորեն (ըստ Էկոնոմիստրիկ գնահատումների) տեղի է ունեցել ակտիվների մակարդակի և պետական պարտատոմսերի պորտֆելի ծավալի ազդեցությամբ: Հետևաբար, առաջարկվել է գործակալի գնահատումներում ներառել ներդրողների համախմբի ընդայնման ուղղությամբ գրանցված արդյունքները, իսկ

համակարգի արդյունավետ գործունության համար՝ գործակաների համար սահմանված պարտավորությունները արդյունավետ կերպով հակառակ արտոնություններով:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են հետևյալ հոդվածներում.

1. **N. Karapetyan** (2021). Impact of Domestic Public Debt on the Banking Sector in Armenia: Is “Lazy Bank” Hypothesis Confirmed? MESSENGER OF ASUE N6(66), DOI: 10.52174/1829-0280_2021_6_7, pp. 8-18.
2. **K. Grigoryan, G. Avagyan, N. Karapetyan, L. Mkhitaryan** (2020). Impact of Macroeconomic Policy Shocks on the Armenian Economy: Evidence from VAR Analysis, Norwegian Journal of development of the International Science, №49, VOLUME 2, Oslo, Norway, pp. 10-15.
3. **Э. Н. Акопян, Н. Н. Карапетян,** (2018), “Как обеспечить устойчивость государственного долга и реагировать на экономические циклы? Модернизация фискальных правил в Армении”, Научно-исследовательский финансовый институт. Финансовый журнал, N4(44), июль-август, <https://doi.org/10.31107/2075-1990-2018-4-10-20>, стр. 10-20.
4. **К.Дж. Варданян, Г.А. Авагян, В.И. Тигранян, Н.Н. Карапетян** (2021) Антикризисная макроэкономическая политика и госдолг Республики Армения в условиях эпидемии Covid-19, Актуальные проблемы развития национальной и региональной экономики: Сборник научных трудов XI Международной научно-практической конференции для студентов, магистрантов, аспирантов и молодых ученых, г. Белгород, 29 апреля 2021 г., с. 53-57.
5. **Ն. Կարապետյան** (2021), ինչպես հաղթահարել «սկզբնական մեղքի» հիմնախնդիրը. Ներքին պետական պարտքի միտումները Հայաստանում. ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, Բաժանմունք 1., էջ 92-107:
6. **Ն. Կարապետյան** (2022). << պետական պարտատոմսերի շուկայի զարգացման հիմնախնդիրները. ախտորոշում և հիմնական ուղենիշներ. ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ N1(67), էջ 33-52:
7. **Ն. Կարապետյան** (2019). Հարկաբյուջետային քաղաքականության երկու հիմնահարց Հայաստանի Հանրապետությունում. Տարածաշրջան և աշխարհ, No 3, էջ 72-77:
8. **Եվ. Բաղինյան, Հ. Բեջանյան, Ա. Այրումյան, Ն. Կարապետյան, S. Ռոստոմյան** (2020). << տնտեսության վրա ազդող արտաքին շոկերը և դրանց փոխանցման ուղիները, Բանբեր ՀՊՏՀ, N3(53), էջ 9-23:
9. **Է. Աղաբեկյան, Ն. Կարապետյան** (2021). Ինչո՞ւ են հայաստանյան բանկերը ավելացրել պետական պարտատոմսերում ներդրումները. Վիաստեր

բանվերի մակարդակով գնահատումներից. ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ N4(64), DOI: 10.52174/1829-0280_2021_4_29, էջ 29-48:

10. **Թ. Մկրտչյան, Ն. Կարապետյան (2022).** ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալի ինստիտուտը եւ դրա արդյունավետության բարձրացման հնարավորությունները, Տարածաշրջան և աշխարհ, 2022, No 1, էջ 161-168:
11. **Կ. Գրիգորյան, Գ. Ավագյան, Ն. Կարապետյան, Լ. Միհիթարյան (2021).** ՀՀ պետական պարտքի կայունության հիմնախնդիրները, Բանբեր ՀՊՏՀ N2(62), էջ 33-47:
12. **Հ. Բեջանյան, Եվ. Բագինյան, Ա. Այրումյան, Ն. Կարապետյան, Տ. Ռոստոմյան.** Մակրոտնտեսական անկայունության եւ ֆինանսական ճգնաժամերի տեսանմեթոդական հիմնահարցեր. ԱՅԼԸՆՏՐԱՆՔ գիտական հանդես, 2020 N4, հոկտեմբեր – դեկտեմբեր. էջ 1-14:
13. **Ք. Վարդանյան, Գ. Ավագյան, Ն. Կարապետյան (2021).** «Պետական պարտքի կառավարման և տնտեսական աճի վրա պարտքի ազդեցության վերաբերյալ տեսությունների և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների մեկնաբանում», Հանրային կառավարում 1/2021, 116-129 էջեր:
14. **Ք. Վարդանյան, Գ. Ավագյան, Լ. Միհիթարյան, Ն. Կարապետյան (2020).** Մակրոտնտեսական քաղաքականությունները և պետական պարտքի կուտակումը ՀՀ-ում, ԱՅԼԸՆՏՐԱՆՔ գիտական հանդես, 2020թ հուլիս – սեպտեմբեր, Էջեր 22-38:

ВЛИЯНИЕ ВНУТРЕННЕГО ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА НА РАЗВИТИЕ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ В РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится в 9 июня 2022 года в 14.00, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

АННОТАЦИЯ

За прошедшее десятилетие государственный долг и долговое бремя РА значительно увеличились, а более 70% государственного долга составляют внешний и валютный долг.

Согласно общему мнению экономистов, такая структура долга является рискованной с точки зрения налогово-бюджетной и макроэкономической стабильности. Тем не менее, как и во многих других развивающихся странах, рынок государственных облигаций в Армении значительно углубился, однако его группа инвесторов сосредоточена вокруг коммерческих банков РА, благодаря чему государственные облигации имеют значительный вес в структуре их активов.

С этой точки зрения можно выявить влияние государственных облигаций на финансовую систему и финансовое посредничество в РА. Учитывая, что как инвестиции в государственные облигации, так и финансирование реального сектора экономики сосредоточены вокруг банковской системы, важно обеспечить сбалансированное, пропорциональное углубление рынка государственных облигаций для обеспечения улучшения долгового портфеля с минимальным «штрафом» финансового развития и экономического роста.

Цель и задачи исследования: Цель диссертации - оценка влияния внутреннего государственного долга на финансовую систему и финансовое посредничество РА и определение путей совершенствования политики управления долгом, направленной на снижение негативных последствий. Исходя из поставленной цели, в диссертации были предложены и решены следующие задачи:

- изучить теоретические подходы и более значимые исследования, касающиеся государственного долга и развития внутреннего рынка государственного долга;
- изучить теории и исследования, касающиеся развития финансовой системы, а также взаимосвязей между внутренним государственным долгом и развитием финансовой системы;
- анализировать развитие внутреннего государственного долга в РА и обуславливающие их факторы;
- анализировать тенденции финансового посредничества в Армении, уделяя особое внимание развитию банковской системы;
- проанализировать структуру инвестиций банковской системы РА в государственные облигации РА (по данным банков), ее особенности и тенденции;

- оценить факторы, влияющие на инвестиции коммерческих банков РА в государственные облигации РА;
- оценить в государственных облигациях РА влияние инвестиций коммерческих банков РА на их финансовые показатели;
- изучить проводимую в РА политику управления долгом и проанализировать развитие первичных и вторичных долговых рынков, оценить уровень их развития и влияющие факторы;
- выявить особенности института агента первичного рынка государственных облигаций в РА, представить предложения, направленные на его улучшение;
- направлять основные цели развития рынка государственных облигаций РА и предлагать пути их достижения.

Научная новизна диссертации. Научная новизна диссертации заключается в следующих основных положениях:

- обосновано, что увеличение доли внутреннего долга в структуре государственного долга РА обусловлено преимущественно эффективностью политики управления долгом, а влияние спроса на облигации ограничено, за исключением ситуаций валютных кризисов, когда расширение внутреннего долга резко замедлилось;
- на основе данных, полученных от коммерческих банков РА, были оценены факторы, влияющие на инвестиционные решения банков, выявлено влияние инвестиций в государственные облигации на финансовые показатели банков;
- по отдельным направлениям оценены уровни развития первичного и вторичного рынков государственных облигаций РА, существующий разрыв между ними, обоснована в целях сокращения разрыва необходимость совершенствования политики управления государственным долгом;
- оценены факторы, влияющие на распределение государственных облигаций РА, объемы оборота вторичного рынка и особенности деятельности института первичных диллеров.

Теоретическая и практическая значимость исследования. Результаты исследования могут быть применены Министерством финансов РА, Центральным банком РА и другими структурами в процессе управления государственным долгом и налогово-бюджетной политики.

IMPACT OF DOMESTIC PUBLIC DEBT ON THE DEVELOPMENT OF THE FINANCIAL SYSTEM AT THE REPUBLIC OF ARMENIA

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics
for the specialty 08.00.03 “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place at 14:00, on 9th of June at 014 Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics.

Address: 128 Nalbandyan St., 0025, Yerevan, Armenia.

ABSTRACT

The RA Government debt and its burden have steadily increased during the last decade, with the external and foreign currency debt accounting for more than 70% of public debt. According to the general consensus among economists, this may be risky in terms of fiscal and macroeconomic stability. Nevertheless, like many other developing countries, Armenia also managed to deepen its government bond market, but the investor base of the government bonds is concentrated in the RA commercial banks raising bond investments to a significant share in the assets.

In this regard, it is important to reveal the effects of investments in government bonds on the financial system and financial intermediation in the RA. Given the concentration of bond investments and the financing of the real sector around the banking system, it is important to ensure that the deepening of the government bond market is well-balanced and harmonious—to ensure improvement in the debt profile while minimally “penalizing” financial development and economic growth.

The aim of the research is to assess the effects of domestic public debt on the RA financial system and financial intermediation and to reveal the possible directions for improving the debt management policy to reduce the negative effects. To reach the aim, the following goals were set:

- To study the theoretical approaches and literature on public debt and the domestic public debt market.
- To study the theories and the literature on financial system development and interrelation of public debt and financial system development.
- To analyze the dynamics of the domestic public debt and its determinants in the RA.
- To examine the trends of financial intermediation in the RA focusing on the banking sector.
- To analyze the structure of banking system investments in the RA Government bonds (by banks), its characteristics and trends.
- To assess the factors affecting the investment decisions of the RA banks.
- To evaluate the impact of the RA Government bond investment on the financial performance of the RA banks.
- To study debt management policies and analyze the performance of primary and secondary debt markets, assess their development and its determinants in the RA.
- To reveal the characteristics of the primary dealer system in the RA Government bond market, propose ways for its improvement.

- To outline the priorities for the RA Government bond market development and propose measures for improving the debt management policies.

The scientific novelty of the thesis is expressed in the following:

- It was justified, that the domestic debt share increase in the public debt is determined by the effectiveness of the debt management policy, with limited demand-side factors except for currency crises when the growth of domestic debt is slowing significantly.
- Based on the bank-level data the determinants of investment decisions of banks and the impact of investments in government bonds on their financial indicators were assessed.
- The development stages of the primary and secondary government bond markets and their gaps were assessed and the importance of improving the debt management policy for closing the gaps was justified.
- The factors affecting the demand for bonds, secondary market activity, and the probability of primary dealer status were estimated.

The theoretical and practical significance of the thesis. The results of the research can be applied in the debt management and fiscal policy-making process by the RA Ministry of Finance, Central Bank, and other institutions.

A handwritten signature in blue ink, appearing to be "R. Sargsyan".